

Աննան փոքրամասնութիւնը աշխատում է երկարացնել վիճարանութիւնները ժողովի կազմի հակառակ: Այդպիսի դժուար դրութիւնը պահանջում է, որ սպիկերը և ժողովը խառնվեն գործի մէջ: Երևում է, որ մեր սովորական կանոնադրութիւնը անբարենպաստ է վիճարանութիւնները կանոնադրելու համար: Այդ նշանակող առաջարկութիւնը, որ յիշված էր գահական ճանապարհի մէջ և որ երկրի ապահովութեան համար անհրաժեշտ է համարված ժողովի մեծամասնութեան շնորհիւ, որ այդ նպատակին հասնելու համար դիմում է ժողովի համար վերաորոշուցիչ միջոցներին: Համայնքների ժողովի արժանաւորութիւնը, պատիւը և հեղինակութիւնը պահանջում են, որ այդ գործին վերջ դնելի: Այժմեան կանոնադրութիւնը այդ կողմից արգելում է ժողովին կատարել իր կամքը, ուրիշ անհրաժեշտ է դիմել մի նոր, բացառական միջոցի: Եւ կարծիքով, եւ կատարած կը լինեմ ժողովի կամքը և կը ստանամ նրա հաւանութիւնը, եթէ իսկոյն կընդհատեմ վիճարանութիւնները և կառաջարկեմ այնպիսի սկսել քուէարկութիւն: Եւ առաջարկում եմ ժողովին, որ նա միջոցներ գտնէ վիճարանութիւնների կանոնադրութիւնը ապահովելու համար, կամ աւելացնէ իր սեփական հսկողութիւնը, կամ աւելի մեծ իշխանութիւն տայ իր նախագահին: Այդ խօսքերից յետոյ սպիկեր սկսեց ձայներ հաւաքել և կառավարչական առաջարկութիւնը ստացաւ 164 ձայն 19-ի դէմ: Այնուհետեւ իրանդացի պատգամաւորները բաւական ժամանակ կանչում էին «իսկ պատգամաւորների արտօնութիւնները» ու մի առ մի դուրս էին գնում դահլիճից, հեղեղեմէն սպիկերին գլուխ տալով: Առհասարակ ժողովը աւելի նեղացաւ այդ անցքից, քան թէ ուրախացաւ: Բոլոր ժամանակը մինչև այդ գործողութիւնը կատարվում էր, սպիկեր ոտքի վրա կանգնած էր:

մտածում է հայրենիքի փրկութեան համար: Գուցէ քո ծնողների ցաւալի վախճանից դրդված, ուխտեցիր վրէժխնդիր լինել բռնութեան դէմ:—բայց մասձիւր, որ ամբողջ հայ ժողովուրդը պրկում է, խորովում է, ոչնչանում է նոյն բողոքի մէջ, որ լափեցին քո անբախտ ծնողներին, նոյն բողոքի մէջ, որոնց միջից դու մի բարի բախտով դուրս պրծար: Նոյն բողոքը թողեցին քո մարմնի վրա բռնութեան ձեռքի անհնազանդութիւնը, ամեն անգամ, երբ կը նայես նրա վրա, յիշիր, որ դա քո ուխտագրութեան կնիքն է, յիշիր, որ դու չարաչար կը մեղանչես Աստուծոյ և քո ծնողաց հողիներին առջև, եթէ չը կատարես այն սուրբ խոստումները, որ ուխտեցիր նրանց գերեզմանի վրա:

Պատանին լուսութեամբ լուսւմ էր տիկնոջ խրատները, որպէս մի ուխտաւոր, որ խորին վերմուռնադրութեամբ լուսւմ է քրմուհու պատգամները: Տիկնուր յայտնեց, թէ զանազան տխուր հանգամանքներ ստիպում են առժամանակ հեռացնել նրան հայրենի երկրից, և ծերունի ներքինապետին հետ խորհելով, վճարեցաւ նրան ուղարկել Վրաստան: Պատանին յանձնարարական նամակներ կը տանէ իր հետ և այնտեղ թէ խնամակալութիւն և թէ պաշտպանութիւն կը գտնէ մի հայազգի իշխանից, որը բարձր պաշտօն է վարում վրաց թագաւորի մօտ: Տիկնուր խոստանում է միշտ և ամեն ժամանակ օգնել պատանուն, որը համարձակ կարող է դիմել իրան, եթէ որ և իցէ բանի մէջ պէտք կունենայ:

—Առ այժմ, վերջացրեց նա իր խօսքը,—ես իմ օրհնութեան հետ կարող եմ տալ քեզ այդ վերքի վրայ, որը գուցէ հարկաւոր կը լինի քեզ քո պանդխտութեան մէջ:
—Ինձ բաւական է ձեր օրհնութիւնը միայն, պատասխանեց պատանին, հրաժարվելով ընդունել քանակը:—Իմ ծերունի հայրը հողացել է բուրբ, ինչ որ պէտք է իմ ճանապարհորդութեան համար:
Վե ջին խօսքերով նա ակնարկում էր ծերունի

Այնուհետեւ սկսեցին կարգալ ճորտերի առաջարկութիւնը, որի երկրորդ ընթացիկութիւնը նշանակվեցաւ կէսօրին: Առաջ քան թէ նախագահը յայտնեց նիստի ընդհատումը, Վարդապետ սկսեց խօսել:
«Պարտմենտական վիճարանութիւնները կանոնադրելու համար, ասաց նա, ես մտադիր եմ հետեւելու առաջարկութիւնն անել: Եթէ կառավարութիւնը մի առաջարկութիւն կանի, որի քննելը անհրաժեշտ է պետական գործերի դրութեան պատճառով, եթէ սպիկերի առաջարկութեամբ 40 անդամներ այդ հարցի վճռելը անհրաժեշտ կը համարեն, սպիկեր իրաւունք կունենայ անյայտ քուէարկութիւն սկսել, առանց վիճարանութիւնների:»

ԿՈՄՍ ՄՈՒՏԿԵՒ ԵՒ ԱՄՍԱԿ

Լրագիրների մէջ տպված կոմս Մօլտկէի նամակից, որի մասին «Մշակի» անցեալ համարներից մէկի մէջ տեղեկութիւն տուինք ընթերցողներին, հետեւեալ քաղուածքներն ենք անուամբ «Ամենից առաջ» դրում է կոմսը, եւ գնահատում եմ այն մարդասիրական ձգտումները, որոնց նպատակն է պատերազմից առաջացած դժբաղդութիւնների առաջն առնել: Յաւիտենական խաղաղութիւնը մի ցնորք է և գեղեցիկ ցնորք է: Աստուծոյ ստեղծած աշխարհի համար պատերազմը անհրաժեշտ մի պայման է: Պատերազմը զարգացնում է մարդկային ամենագին ձգտումները՝ քաջութիւնը, անձնագոհութիւնը, հաւատարմութիւնը և պարտաճանաչութիւնը: Զինուորը գոհում է իր կեանքը: Եւ համաձայն եմ, որ մարդկութեան բարք ու վարքի նրբութիւնը պէտք է ազդէ նոյնպէս և պատերազմելու եղանակի վրա: Բացի այդ վարք ու բարքի նրբութիւնը կարող է հասցնել այն նպատակին, որին անկարելի է հասնել պատերազմական միջազգային

նի ներքինապետի վրա, որին իր հայր էր կոչում, որի երախտը իր կեանքի պահպանութեան համար երբեք մոռանալ կարող չէր: Բայց տիկնուր դարձեալ ստիպեց նրան ընդունել քուէարկը, որը չը մերժեց նա, համբուրելով իր բարեբախտ աջը:

Վրանի մէջ դրադված լինելով, թէ տիկնուր և թէ ներքինապետը չէին նկատել, որ դրսում եղանակը բարձրովն փոխվել էր: Երկիրը պատած էր սև ամպերով և սաստիկ քամին, որ աւելուծում էր անտառի ծառերը, սպառնում էր ստակալի փոթորիկ: Անտառը որոտում էր ծառերի միմեանց զարկվելուց, լեռները թնդում էին, իսկ կայծակը երբեմն փայլատակում էր գլխերային մթութեան մէջ: Կարծես, աշխարհի վերջը հասել էր և տիկնուրը լցված էր ահաւելի արհաւիրքով: Անձրև դուռ չը կար, միայն երբեմն խոշոր կաթիլներ, քամու սաստիկ հոտանքի հետ թռչելով, գնտակի նման զարկվում էին մարդու երեսին: Տիկնուր, նկատելով եղանակի խստութիւնը, խորհուրդ տուեց ներքինապետին յետաձգել պատանու փախուստը: Ծերունին համաձայնեցաւ նրա հետ:

—Այս գիշեր ամենայնպէս ժամանակն է, պատասխանեց պատանին մի առանձին վտտահութեամբ,—ես սիրում եմ այսպիսի եղանակը: Չեմ կարող մնալ, պիտի գնամ:

—Գուցէ բաւական տկար ես, ասաց տիկնուր կարեկցութեամբ,—փոթորիկի ժամանակ այդ լեռների վրա շատ ցուրտ է լինում, կարող ես մրսել, կարող ես կրկին հիւանդանալ:

—Կարող է ուրիշ վտանգներ եւ պատահել, աւելացրեց ծերունին,—եթէ անձրև սաստիկանալու լինի, ձորերի մէջ հեղեղներ կը բարձրանան: Պատանին հաստատ մնալով իր որոշման վրա, պնդեց, թէ ոչինչ չէ կարող արգելել նրա բռնորոտութիւնը, թէ նա ցանկանում է մի րոպէ առաջ դուրս գալ, հեռանալ այն միջուրդից, որի օգը նրան խնդրում է, ուր ամեն ինչ նրա սրտում ցաւ և կակիժ է յարուցանում:

օրհնարութեան օգնութեամբ: Մարդուութեան աջողութիւնը պատերազմելու եղանակի մէջ նոյն նրբութեան հետեւանքն է: Համեմատեցէք երեսնամեայ պատերազմները այժմեան պատերազմների հետ: Ընդհանուր պարտադիր զինուորագրութեան օգնութեամբ զորքերի մէջ մտնում են լուսաւորված մարդիկ: Գա մեծ առաջարկում է: Այնուհետեւ Մօլտկէ նկատում է, որ պատերազմի ամենամեծ բարութիւնը նրան արագութեամբ կատարելն է: Այդ նպատակի համար կարելի է բոլոր միջոցները գործ դնել, բացի կատարելագէտ փատերից: Պատերազմը աջողեցնելու համար պէտք է քննանել թշնամի կառավարութեան, բոլոր միջոցներին, ֆինանսներին երկաթուղիներին, պահեստներին և մինչև անդամ նրա հեղինակութեանը: Այսպիսի եռանդով կատարեց Գերմանիոն իր վերջին պատերազմը Ֆրանսիայի հետ: Պատերազմի բարդը երկու ամսվայ մէջ որոշվեցաւ և նա զայրացած բնաւորութիւն ստացաւ միայն այն ժամանակ, երբ Ֆրանսիական ազգային կառավարութիւնը վճռեց շարունակել պատերազմը էլի չորս ամիսներ: Վերջը կոմս Մօլտկէ նկատում է, որ եթէ բոլոր պետութիւնները կընդունեն դերիներին, հիւանդների և առողջապահական կանոնների վերաբերեալ առաջարկութիւնները միջազգային ինստիտուտի կողմից, դա էլ մեծ առաջադիմութիւն կը լինի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բարտեղի մի Անտառ-Նլերի ասած ճառի մասին որ արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին, «Temps» լրագիրը յայտնում է հետեւեալ կարծիքը, որ գրեթէ չէ գնահատելու հանրապետական միւս լրագիրները հայեացքներից: Մենք չենք կարող հաւանութիւն չը տալ արտաքին գործերի միջոցներին, նկատում է լրագիրը, այն բանի համար, որ նա սկսեց պաշտպանել իր նախորդների գործունէութեան եղանակը: Մենք չենք մեղադրում միջոցներին որ նա ինքնուրոյն

Մերին հասկացաւ պատանու արտի վշտերը, հասկացաւ, թէ ինչն է դուրս քշում նրան այդ երկրից, վճռեց չը հակառակել նրա ցանկութեանը և ամեն ինչ թողնել Աստուծոյ կամքին:

—Զրաները, մարդիկը որտեղ են, հարցրեց նա ներքինապետից:

—Անտառում պահված են, պատասխանեց ծերունին:

—Պատրաստվեցէք պատանուն ճանապարհ դնել, Անմէդ, ինչ որ Աստուած կամեցել է, այն կը լինի, ասաց տիկնուր խորին հաւատքով,—գուցէ այդ փոթորիկը Աստուած յարուց հէնց նրա համար, որ պարսիկները քաշվին իրանց վրաններում, ճանապարհների վրա ոչ ոք չը մընայ, որ պատանու փախուստը աննկատելի լինի: Ծերունի ներքինապետը մտաւ վրանի գագաւորները, որ բաժանված էր վարագուրով, այնտեղից դուրս բերեց մի գոռոց արծառակ և մի թուր, վերջինը նա իր ձեռքով կապեց պատանու մէջքից, և գոտեօրելով նորընծայ ասպետին իր նոր կոշիկն մէջ, ասաց:

—Ես բացի այդ թուրից ուրիշ թանգազին բան չունեմ քեզ ընծայելու համար, Գալիթ,—դա Միւրեանց աշխարհի մի հզօր թագաւորի թուրն է, որ ես դուրս եմ բերել խանի գանձարանից: Այդ թուրը, որ մի ժամանակ հայ թագաւորի հզօր ձեռքում պաշտպանում էր մեր հայրենիքը, թող այսօրհետեւ յիշեցնէ քեզ նրա ցաւալի անկումը, թող այսօրհետեւ ողորտէ քեզ նրա վերականգնման համար գործել: Գուցէ քեզ է բարձրացնես մեր հայրենիքի փառքը նրա կրօնական փոշինից և վերստին պէտք է կենանք և ազատութիւն պարգեւս մեր թշուառ աշխարհին: Ես այդ խօսքերը իմ գլխից չեմ խօսում, այլ Աստուած ինքը յայտնեց ինձ մի տեսիլքի մէջ: Եւ ես հաւատում եմ քո ձակատագրին, դու էլ պիտի հաւատաս քո կոշիկները...
Լսելով այդ խօսքերը, պատանին կարծում էր թէ իր վրա ծիծաղում են, և ծերունին պատրաստ էր պատմել նրան իր սեսած երազի մասն:

կերպով մեկնեց Բերլինի կոնֆերանցիայի վճիռները: Այդ մեկնութիւնները եթէ մի կողմից չեն համապատասխանում կոնֆերանցիայի վճիռներին, գոնէ ապացուցանում են միջոցների ցանկութիւնը աշխատել, որ Ֆրանսիան այսօրհետեւ վտանգաւոր միջոցների չը դիմէ: Յաւալի է, որ միջոցներ աւելի եռանդով չը պնդեց և չը պաշտպանեց այդ կէտը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ե Ը Ե Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Կ Ե Ի Ե

10հոկտեմբերի 4 փետրվարի Տեղական առաջնորդները Մերվի մէջ խորհրդակցեցին և վճռեցին ուսանողներին շաբաթանց ընդդիմադրել: Պատերազմական բոլոր ոյժերը կենտրոնացրած են Տեղական անցնելուն արգելելու համար, որտեղ հասաւ Մակրոմպուլի-խան 5000 տեղիցները և 30 առաջնորդներ Մերվից: Կանդախար ուղեորիցն օգնութիւն խնդրելու համար: Գնեւրալ Վոբոյեկ մտադիր է պարսից հողով անցնել: Լուր է տարածված, որ թիւրքմենները մտադիր են գետի ընթացքը փոխել դէպի արևելք, Մերվի ուղղութեամբ, հակառակորդին ջրից գրկելու համար:

Կեւ, 4 փետրվարի: Երէկ նահանգական դատարանի մէջ վերջացաւ հրէաների դործը կալուածատէր Պօղոսիւու մուհրաբիները 300,000 ռ. գումարի կեղծելու մասին: Գործը քննվում էր չորս օր: Բոլոր վեց մեղադրվածներն էլ երկվեալ դատաւորներից մեղաւոր են յայտնված, երկուսի պատիժը մեղմացրած է:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՊ, 4 փետրվարի: Կայնաւորված է գաղտնի պօլիցիայի գործակաւարը, որի ել և մտից դրքի մէջ նշանակված էր ամառական մուտք 150 ռ.: Կա խոստովանվեցաւ, որ նիհիլիստներից փոխ էր ստանում փոքրիկ ծառայութիւնների համար: Գործակաւարը համաձայն չէր յեղափոխականների հաղորդութիւնների հետ իր գաղափարների ձեռի մասին: Նրա դէմ ծանր մեղադրանք կայ յեղափոխականներից կաշառվելու վերաբերութեամբ:

ԽՈՒՐԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

բամանութիւնները, բայց տիկնուր զգուշացրեց նրան, որ չէ:

—Այդ հասակում տղայի հետ այդպիսի բաների վրա չեն խօսում, ասաց նա արարեհն լեզուով:—Երբ ժամանակը կը գայ, նա ինքը կը հասկանայ բոլորը...

—Այժմ բարի ճանապարհ եմ մտղթում քեզ, ասաց տիկնուր պատանու ձակատը համբուրելով,—կրկնում եմ, որտեղ որ լինես, ամեն մի պետքի, ամեն մի փառնոցի ժամանակ կարող ես վրատահութեամբ դիմել ինձ, եւ պատրաստ եմ ամեն մի հանգամանքում օգնել քեզ:

Պատանին խորին շնորհակալութեամբ համբուրեց տիկնուր աջը և մի քանի կաթիլ արտասուք գլորվեցան նրա ձեռքի վրա: Նա մնաք բարեաւաւաց և իսկոյն դուրս եկաւ վրանից, գիշերային մթութեան մէջ ծածկելու իր դառն արտասուքը: Ծերունի ներքինապետը հետեւեց նրան:

Տիկնուր մնաց վրանում միայնակ, տխուր և սաստիկ սրտաշարժ դրութեան մէջ: Կարծես նրա հարազատ եղբայրը դէպի օտարութիւն էր գնում, կարծես, նրանից մի ամենասիրելի բան պակտում էր: Նա լուռ յափուտակութեան մէջ ծռուրդրեց վրանի յատակի վրա և նրա վշտերով լի աչքերը դարձան դէպի արդարադատ երկինքը: Ինչ բանի համար էր ազօթում նա,—այդ միայն Աստուած գիտէ: Բայց ջերմ արտասուքը առատութեամբ թրջում էր նրա գունաթափ դէմքը, և երկար նոյն դրութեան մէջ մրմնջում էր նա, մինչև կայծակի վերջին փայլը լուսաւորեց վրանի մթին շրջակայքը, և հեռացող պատանու քայլերի ձայնը ծածկվեցաւ որոտման սաստիկ զրրոցի տակ:

Փոթորիկը աւելի ստակալի կերպարանք ստացաւ...

Առաջին գրքի վերջը